

այն տեղ կը տեսնեմք, որ մեր երկիրն ազատութիւն չ'է ունեցած, ուստի ուրիշ աղբաց նման իւր կեանքն ու կենցաղն չեն երգուած, իւր աւանդութիւններն ու զրոյցներն չեն նուազուած, վասն զի բանաստեղծութիւն, քերթութիւն, և ճարտարաստութիւն միայն ազատութեան հոլոյն վերայ կը ծին ու կը ծաղկին:

Հայրենեաց սէրն նոր պէտք է բանաստեղծներ յարուցանէ. ժողովրդեան կեանքն նոր պէտք է պատմիչներ և վիպասաններ ունենայ, և այս ուրիշ բանով չը լինիր, եթէ ոչ ԳՐՈՑ ու ԲՐՈՑի նման երկասիրութեանց բազմանալով:

### ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Ս. Ծննդեան եւ Մկրտութեան հանդէսն ամենայն փառաւորութեամբ և խաղաղութեամբ կատարուեցաւ ՚ի Ս. Բեթլէհէմ: Սոյն Տօնախմբութեան ժամանակ մեծ համակրութեամբ վարուեցան Յոյնք և մինչեւ անգամ մեր Ս. Պատրիարքի երթալու և դառնալու ժամանակ Ս. Եղիայի վանուց զանգակներն սկսան հնչեցնել ՚ի պատիւ Ս. Պատրիարքին և համօրէն ուղեկցաց:

Սակայն այն քրիստոնեավայել խաղաղութեան արտաքին ցոյցերն երկար չը տեսցին: Յետ ութն աւուրց ՚ի Տօնի Անուանակոչութեան Տեառն, ըստ հնաւանդ սովորութեան, յետ Պատարագին մեր Տեսուչն սիւնաղարդ գաւթէն անցնելու ժամանակ Յոյնք սկսան դիմադրել, զանգակն հնչեցնել և իրենց քաղաքացի ժողովուրդն ՚ի կռիւ հրաւիրել, գաւթի փայտեայ դուռն գոցել, մեր Մխաբաններն պաշարել և բիրերով ձեծել:

Սոյն կռւոյն մէջ մեր վանուց խոհարարն գլուխն սաստիկ վիրաւորուելով յերուսողէմ բերուեցաւ եւ վսեմ. Փաշային ներկայացաւ արիւ-

նաթաթաւ: Փաշայն Բեթլէհէմի վերդովման առաջն առնելու կարեւոր միջոցներն ձեռք առնելէն զինի՝ կամեցաւ քննութիւն բանալ եւ յանցապարտներն պատժել ըստ արժանւոյն: Բայց Յունաց Ս. Պատրիարքի կողմէն թարգմանն ներկայացաւ մեր Ս. Պատրիարքին, յայտնելով՝ որ առանց Պատրիարքական Վարչութեան գիտութեան կատարուած է այդ դիմադրութիւնն, ուստի գործն քննութեան չը ձգելու համար՝ իրենք պատրաստ են յանցաւորներն մեր Պատրիարքարանն կոչել եւ ներողութիւն խնդրել տալ մեր Ս. Պատրիարքէն և տալ ինքեանք առանձինն իրենց վարչութեամբ պատժել՝ առանց այլոյ միջամտութեան:

Մեր Ս. Պատրիարքն Բրիտանիական հանդիսաւոր Տօնից և այցելութեանց առթիւ ներողամտութեան հոգւով ընդունեց Յունաց Պատրիարքի առաջարկութիւնն և յանցաւորներն գալով ներողութիւն խնդրեցին և գործն այսպէս վերջացաւ և Փաշային հաղորդուեցաւ:

— Երկար ժամանակին ՚ի վեր Տօնական այցելութիւններն ընդհատած էին Մեր եւ Յունաց Պատրիարքաց մէջ, ներկայ Վսեմ. Փաշայի խաղաղասիրական միջամտութեամբ վերջ տին սկսան եւ մեր Ս. Պատրիարքն արդէն այցելութեան գնաց Յունաց Ս. Պատրիարքին, և սա անշուշտ փոխադարձ այցելութեան պիտի դայ:

(Տես թիւ 1874, Դեկտեմբեր 31:)

| ԵՐԵՍ | ՏՈՂ | ՍԻՆԸ | ՎՐԻՊԱԿ             | ՈՒՂԻՂ              |
|------|-----|------|--------------------|--------------------|
| 273  | 5   | Ա.   | Թիւրքու            | ձեւերու            |
| "    | 3   | Բ.   | Վարդապետութիւն     | Վարդապետութիւն     |
| "    | 30  | Բ.   | Բարձրացի           | Բարձրացի           |
| 274  | 28  | Բ.   | անապան             | անապան             |
| 275  | 25  | Ա.   | եղերանց            | եղերանց            |
| "    | 30  | Բ.   | մեծ հատար          | մեծ հատար          |
| "    | 30  | Բ.   | կապետութիւն        | պետութիւն          |
| "    | 30  | Բ.   | ժողովուրդ, թագաւոր | ժողովուրդ, թագաւոր |